բաղաքապետ է եղել, սակայն ձիավորեցուցանելու առաջին վկայությունը հանդիպում է 12-րդ դարի երկրորդ կեսին։ Այսպես, Լամբրոնի իշխան Օշինը (1140—1170 թթ.) «ետ մկրտել զՀեթում (Օշինի որդին—Ս. Բ.) և արար ձիավոր և պսակեաց ընդ դուստրն իւր ի մի օր և ուրախացան յոյժ»[77]։

Այս վկայությունը կարևոր է նրանով, որ հերքում է ֆրանսիացի պատմաբան հայագետ Ժակ դը Մորգանի և Ղևոնդ Ալիշանի այն ենթադրությունը, որ մինչև 1193 թ. Լևոն Բ-ի կողմից Անտիոքի իշխանության լճության թոթափումը հայ իշխանները իրավունք չեն ունեցել ձիավորեցուցանել իրենց ավատառու իշխան ասպետներին[78]։

Վերոհիշյալ պատմաբանները գրում են, որ Լևոն Բ-ը բազմաթիվ ազատներին շնորհեց ասպետի կոչում[79]։ Բայց մեզ չհաջողվեց գտնել որևէ վկայություն այդ մասին։ Իհարկե, «ձիավորեցուցանելու» բազմաթիվ վկայություններ կան Լևոն Բ-ի հաջորդների վերաբերյալ։ Այսպես, 1256 թ. Հեթում Ա թագավորը Իկոնիայի սուլթանի դեմ տարած հաղթանակից հետո «բազում աւարաւ դարձաւ աշխարհն իւր և ուրախացաւ ոչ սակաւ աւուրս ի սոյն ամի ՉԷ (1256 թ.) կամեցաւ թագաւորն Հեթում ձիաւորեցուցանել զԱնդրանիկ որդին իւր Լևոն (15 նոյեմբեր 1256 թ.) և յեկն ի մայրաքաղաքն Մսիս և առաքեաց յԱնտիոք և կոչեաց իշխանս և որ ի վանօրէից զամենայն դասս եկեղեցականցն ժողովեաց յառաջիկայ ուրախութեան գործին և ձիաւորեցոյց զնա ի թուականին ՉԵ (1256) յամենայն նոյեմբերի ԺԵ օրն, և ուրախացաւ թագաւորն ուրախութեամբ մեծ հանդերձ հարքն իւրովն և ամենայն զարմիւքն և ժողովովն որ եկեալ էին»[80]։

Հեթում Ա-ը 1264 թվին թոռ ունենալու կապակցությամբ շատերին պարգևում է ձիավորի աստիճան։ «Ի սոյն ամի ՉԺԳ (1264) որ և բազում ի վատթարագոյնից և յանգերագոյն ազգաց նաև ի ներքինեաց ևս փառաց և պատուոյ ձիաւորութեան արժանացան»[81]։

Նույնը կատարվում է Լևոն Բ-ի մկրտության առթիվ. «Եւ յաղագս այսմ ուրախութեան պատճառի զերկոսս որդիսն սպարապետին հայոց Սմբատայ՝ զՀեթում և զՎասիլ մականուն Թաթար ձիաւորեցուցին և այլ բազումս ընդ նոսա...»[82]։

Հեթում Ա-ի հաջորդ՝ Լևոն Գ-ը իր երկու որդիներին՝ Թորոսին և Հեթումին «ձիավորեցուցանելու» առթիվ (որը տեղի է ունենում Աստվածահայտնության տոնին), այդ թվում «ձիավորեցուցանում է» «և այլ մանկունք իշխանաց և արք յարքունական»[83]։

Թեև հետագա շրջանի համար մենք չունենք «ձիավորեցուցանելու» մասին այլ վկայություններ, սակայն այդ սովորությունը մնացել է մինչև թագավորության վախճանը։ Այդ երևում է նրանից, որ 1374 թվին Լևոն Զ թագավորին օծության առթիվ վերջինս «ձիավորեցուցանում» է իր համհարզներից մեկին։

---

77 «Սմբատ Սպարապետի տարեգիրք ի Վենետիկ», 1956, էջ 171։

78 Ղ. Ա լ ի շ ա ն, Սիսուան, էջ 466։ Ժ ա կ դ ը Մ ո ր գ ա ն, Հայ ժողովրդի պատմություն, էջ 259։

79 «Սմբատ Սպարապետի տարեգիրք», 1956, էջ 231։

80 Նույն տեղում, էջ 244։

81 Նույն տեղում, էջ 245։

82 Ղ. Ա լ ի շ ա ն, Սիսուան, էջ 405։

83 Ղ. Ա լ ի շ ա ն, Սիսուան, էջ 405։